2126.211278

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«24» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0040-21

Ձեռնարկողը՝ ***«ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ***
Ք. Երևան, Շիրազի գ-1 թաղ. 7/10

Գործունեությունը՝ ***«Դիլիջան» ԱՊ տեղամաս 1-ին քառ. 9 անտառամասի տարածքում հանգստյան գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0040-21

<24> 02 2021թ.

«Դիլիջան» ազգային պարկի տեղամաս 1-ին քառ. 9 անտառամասի տարածքում հանգստի գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

«ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է «Դիլիջան» ազգային պարկի տեղամաս 1-ին քառ.9 անտառամասի տարածքում կառուցել հանգստի գոտի:

Գործունեությունն իրականացվելու է Դիլիջանի համայնքապետարանի կողմից 2020թ հուլիսի 29-ին տրամադրված ՆԱ1-44 և ՆԱ1-45 նախագծման թույլտվությունների հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներով վարձակալության հիմունքներով ամրագրված՝ 0.298223հա և 0.223հա մակերեսով հողամասերում, որոնց նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզում՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, դեպի Պարզ լիճ տանող ասֆալտապատ ճանապարհին հարակից երկու հեղամասերում՝ Պարզ լճից մոտ 5կմ, Աղստև գետից և Մ4 ավտոմայրուղուց՝ մոտ 1,5կմ հեռավորությունների վրա: Հողամասերի ընդհանուրը մակերեսը կազմում է 5213մ^2:

Համաձայն նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ հայտ) նախատեսվող գործունեության տարածքում կատարվել է երկրաբանական հետախուզություն, որտեղ ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել: Տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը բացակայում են: Համաձայն ուսումնասիրության պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Գործունեության ենթակա տարածքների հողերն անտառային մուգ դարչնագույն, չափավոր խոնավ հողերն են՝ միջինը 25 սմ շերտի հզորությամբ:

Գործունեության ենթակա տարածքում մակերեսային ջրային ռեսուրսներ չկան, տարածքին հարակից ձորակներում՝ 50-100մ հեռավորության վրա կան հալոցքային ջրեր:

Համաձայն հայտի տարածքը ծառապատ է՝ բուսածածկով: Բուսականության տիպը անտառային է՝ աճում են սաղարթավոր տերևաթափ տեսակներ: Տարածքում առկա են 84

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

ծառատեսակներ՝ արևելյան հաճարենի, թխկի, կեռասենի անտառային, վրացական կաղնի և այլ: Շինությունների տեղադրման լուծումները նախագծվել են, հաշվի առնելով տարածքում առկա ծառերի պահպանման պահանջը: Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու:

Գործունեության ենթակա տարածքը կից է գործող ճանապարհին, ինչն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Գործունեության ենթակա տարածքում կենդանական աշխարհի բնադրավայրեր և միգրացիոն ուղիներ, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել: Տարածքում պատմամշակութային և բնական հուշարձաններ չկան: Ամենամոտ պատմամշակութային հուշարձանը Հաղարծին վանական համալիրն է, մոտ 5կմ հեռավորության վրա:

Գործունեության ենթակա 2983մ^2 ընդհանուր մակերեսով հողատարածքը գտնվում է Դիլիջանի Պարզ լիճ տանող ճանապարհին հարող հատվածում (մոտ 30մ), որտեղից էլ լինելու է տրանսպորտային միջոցների և մարդկանց մուտքը դեպի հանգստյան գոտի: Համաձայն նախնական գնահատման հայտի նշված տարածքում կառուցվելու է 2 երկհարկանի քոթեջ, ռեստորանային մասնաշենք (ճաշարան), 5 բացօթյա տաղավարներ (որից 1-ը մանկական խաղահրապարակ), գլխիվայր տնակ՝ տաղավար, գիշերակացի սենյակներ, պահակատուն:

Նախատեսվող գործունեության մյուս՝ 2230մ^2 ընդհանուր մակերեսով տարածքը ևս գտնվում է Պարզ լիճ տանող ճանապարհի հարող հատվածում և մուտքը լինելու է Ազգային պարկի անտառմիջյան գրունտային ճանապարհով: Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվում է նշված հատվածի հանգստի գոտու կառուցապատում՝ 3 տիպի երկհարկանի քոթեջներով (7 հատ):

Կառուցապատման և բարեկարգման ընդհանուր մակերեսը կազմում է 1554մ^2, որից.

- 9 հատ քոթեջ՝ 486մ^2,
- ճաշարան՝ 248մ^2,
- 5 հատ բացօթյա տաղավարներ՝ 280մ^2,
- գիշերակացի սենյակներ՝ 138մ^2,
- ճանապարհներ /սալիկապատում/՝ 402մ^2:

Շինությունների թույլատրելի առավելագույն բարձրությունը սահմանված է մինչև 7մ:

Շահագործման փուլում գործունեության տարածքում առանձին ավտոկայանատեղի չի նախատեսվում: Մեքենաները կայանվելու են հանգստյան գոտու տարածքում:

Համաձայն հայտի նախատեսվող գործունեության ենթակա տարածքներում քանդման, ապամոնտաժման կամ տեղափոխման աշխատանքներ չեն նախատեսվում: Տարածքը կառուցապատված և ցանկապատված չէ, բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման համակարգերը: Առկա է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Բոլոր կառուցապատման լուծումները լինելու են համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը՝ չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է շրջակա միջավայրը չվնասող նյութերով:

Տեղադրվող շինությունների հիմքերը նախատեսված են բետոնե հիմքերով և հավաքվելու են մետաղյա ու փայտյա համադրության կոնստրուկցիաներով: Նախատեսվող մանկական խաղահրապարակը նախատեսվում է ծածկով և հանվող պատուհաններով ըստ սեզոնի: Խաղահրապարակի մի մասը լինելու է արհեստական խոտածածկով, մյուս մասը՝ կարմիր ավազով: Երեխաների ժամանցի համար նախատեսվում է տեղադրել ատրակցիոններ: Շինությունների տանիքները լինելու են կղմինդրային և ապահովված են լինելու անձրևաջրերի հեռացման կազմակերպված համակարգով:

Անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքերը, մաքրված կեղտաջրերը գործունեության տարածքից բակային ներքին ցանցով հեռացվելու են ճանապարհին կից (մոտ 1մ) գոյություն ունեցող ջրահեռացման համակարգ:

ՓՈՐՁԱՔՆՆԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Համաձայն հայտի տարածքում անցկացվելու է 635գծմ ընդհանուր երկարությամբ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ և 348գծմ ընդհանուր երկարությամբ գազատարի ստորգետնյա խողովակներ:

Հանգստյան գոտում քոթեջների և այլ շինությունների ջեռուցումը կատարվելու է յուրաքանչյուր քոթեջում և շինությունում տեղադրվող համապատասխան հզորության գազով աշխատող ջեռուցման կաթսաներով:

Հանգստյան գոտու էլեկտրամատակարարումը (շինարարության և շահագործման փուլ) կատարվելու է գոյություն ունեցող էլեկտրամատակարարման պայմանագրի համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի Դիլիջանի ցանցից: Տեղադրվելու են լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր:

Համաձայն հայտի շահագործման փուլում նախատեսվում է տարածքում տեղադրել 2 բլոկային համակարգով ТОПАС-100 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 16,0մ³ ծավալով (Q=16.0մ³/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%: Մաքրված ջրերը հեռացվելու են տարածքին կից գոյություն ունեցող ջրահեռացման համակարգ: Կեղտաջրերի հեռացումը կատարվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Արտաքին հրդեհամարման համար նախատեսվում է հրդեհաշիջման առանձին համակարգ, որի համար տեղադրվելու են ջրի 2 երկաթբետոնե տարողություններ (ջրամբարներ)՝ յուրաքնաչյուրը՝ 70մ³ տարողության: Ջրային տարողությունները լինելու են ստորգետնյա՝ 4,0x6.0 չափերի, տեղադրվելու են H=3.0մ խորության վրա: Ջրավազանների ծավալները հաշվարկվել է հաշվի առնելով արտաքին հրդեհի մարման ջրապահանջը՝ 5լ/վրկ: Այդ նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական ջուրն օգտագործվելու է հրդեհաշիջման և անհրաժեշտության դեպքում տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հանգստյան գոտին ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով:

Նախատեսվող գործունեության շինարարության ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու են բնական գազ և ջուր:

Շինարարության և շահագործման փուլերում խմելու ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Այդ նպատակով տեղադրվելու է 27,0մ³ ծավալով, 3,0x3.0 և H=3.0մ խորության ներքին չափերով ստորգետնյա, երկաթբետոնյա մեկ ջրամբար՝ թմբապատված, մտոցով և պարզեցված օդակլանիչ ֆիլտրով: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի:

Համաձայն հայտի շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (10 մարդ), ինչը կազմում է 122.5մ³/շին.ժամ, միջին օրական 0.232մ³: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները ապահովելու են՝ տեղադրելով 2 շարժական բիոզուգարան, որոնք տեղադրվելու են վարձակալության հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու են: Վերջիններիս մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

Համաձայն հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, ինչի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ամբարձիչ, էքսկավատոր, կռունկ, բեռնատար և ինքնաթափ մեքենաներ և այլն: Մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածքին կից՝ ճանապարհի եզրին:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են փայտ, բնական քար, կոմինդր, աղյուս, բետոնանյութ և այլն: Բետոնն օգտագործվելու է շինությունների հիմքերի ամրացման համար, ինչը բերվելու է մասնագիտացված կազմակերպություններից՝ պատրաստի վիճակում,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

ըստ պահանջի: Շինարարության տարածքում արտադրական հրապարակ չի նախատեսվում: Տեղադրվող կոնստրուկցիաները՝ ամբողջական (դռներով, պատուհաններով) բերվելու և տեղադրվելու են պատրաստի վիճակում: Շինանյութերի կուտակում ևս չի նախատեսվում, քանի որ վերջիններս բերվելու են հաջորդաբար՝ ըստ պահանջի: Գործունեության իրականացման ժամանակ առաջացած ավելցուկային նյութերը տարածքում չեն կուտակվելու:

Նախատեսվող գործունեությունը ենթադրում է 990,65մ³ ծավալի հողային աշխատանքների իրականացում: Հողային զանգվածն առաջանալու է քոթեջների հիմքերի փորման(132մ³), ջրամատակարարման(164մ³) և ջրահեռացման(293մ³), գազամատակարարաման խողովակների անցկացման(139մ³), մաքրման կայանի(26մ³), խմելու և կենցաղային կարիքների (31.05մ³), հրդեհաշիջման համար նախատեսվող ջրային տարողությունների տեղադրման(ջրամբար՝ 165.6մ³) և ցանկապատի կառուցման (40մ³) աշխատանքներից:

Համաձայն հայտի տարածքում բուսահողի ծավալը գնահատվել է 219.25մ³, ինչի պահպանումն ու օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Հողաբուսաշերտն օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով: Մնացած հողային զանգվածը՝ 771,4մ³ կուտակվելու է տարածքում՝ կատարվող փորվածքների մոտ և շինությունների տեղադրումից հետո օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ կենցաղային աղբն է՝ 1.200տ/տարի կամ 2.400կգ ողջ շինարարաության ընթացքում և 36 տոննա/տարի՝ շահագործման փուլում: Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ, ինչն ամեն օր է հեռացվելու տարածքից: Շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը կուտակվելու է տարածքում տեղադրվող 4 հատ 1,1մ³ տարողության համապատասխան աղբի տարրաներում: Այն պարբերաբար հեռացվելու է համայնքապետարանի համաձայնությամբ՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, կանաչապատում և ցանկապատում: Տարածքը մաքրվելու է ավելորդ աղբից և վերականգնվելու է լանդշաֆտը, կատարվելու է 402մ² մակերեսով ներտարածքային ճանապարհ՝ սալիկապատման տեսքով: Գործունեության տարածքում նախատեսվում է 3658մ² ազատ տարածքի կանաչապատման աշխատանքներ՝ ցանքս: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է վերգետնյա պլաստիկե խողովակներով (ցնցուղային)՝ գոյություն ունեցող ոռոգման համակարգից:

Նախատեսվում է մետաղական ցանցով և հավաքված ճաղաշարով՝ 354մ ընդհանուր երկարությամբ ցանկապատը, ինչն անցկացվելու է 1.1մ խորությամբ տեղադրվող մետաղական ուղղանկյուն խողովակե կանգնակների միջոցով:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն հայտի շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն՝ օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելումը, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերմանն ու դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Մասնավորապես.

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ տեխնիկական սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառելով՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,

-տրանսպորտային միջոցների շարժը կազմակերպվելու է հերթականությամբ՝ չխոչընդոտելով տրանսպորտի երթևեկությունը,

- նվազագույնի են հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը, նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,

- շինարարության ընթացքում առաջացող բուսահողը պահպանվելու է ՀՀ կառավարության 02.11.2017թ. N1404-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ բացառելով բուսահողի վրա հնարավոր բացասական ազդեցությունները՝ թափոններով և կեղտաջրերով աղտոտումը,

- բուսահողը ժամանակավորապես պահվելու է տարածքի առանձնացված վայրում, թմբերի տեսքով՝ ծածկված անջրթափանց թաղանթով,

- գործունեության տարածքում ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում ընկերությունը տեղեկացնելու է «Դիլիջան» ԱՊ-ին՝ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով,

- բուսատեսակները տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,

- կանաչապատված տարածքի խոտածածկի պահպանման և բուսականության բարձր աճն ապահովելու համար իրականացվելու են մշտադիտարկումներ,

- բացառվելու են վնասատուների դեմ պայքարի նպատակով թունաքիմիկատների և այն քիմիական նյութերի օգտագործումը, որոնք ամրագրված են ՀՀ կառավարության 17.03.2005թ. N293-Ն որոշմամբ,

- բացառվելու են ծառահատումները, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը,

- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,

- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Համաձայն հայտի՝ գործունեության իրականացման ընթացքում /շինարարաության և շահագործման փուլեր/ միջոցառումների կատարման վերահսկողությունն իրականցվելու է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է ներդնել 350.0մլն ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Պարզ լիճ տանող ճանապարհին կից հատվածում՝ երկար տարիներ ենթարկվելով անտրոպոգեն ազդեցությունների: Շինարարության փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ: Տեղադրվող կառույցները լինելու են մետաղյա և փայտյա կոնստրուկցիաներով:

Հանգստի գոտու կազմակերպումը խթանելու է տարածաշրջանում էկոտուրիզմի և զբոսաշրջության զարգացմանը, նպաստելու է բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Տավուշի մարզպետարանը, Դիլիջանի համայնքապետարանը: Հայտը լրամշակվել է հաշվի առնելով նաև ստացված առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել հնարավոր շինաղբի կուտակումները:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը՝ բացառելով ծառահատումները:
- Ապահովել հայտով նախատեսված մաքրման կայանի տեղադրումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ կողմից ներկայացված «Դիլիջան» ազգային պարկի տեղամաս 1-ին քառ.9 անտառամասի տարածքում հանգստի գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ Ա. Վարդանյան